ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » 2019թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Ներման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-230-22.07.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի օգոստոսի 7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1092 - Ա որոշումը:

Հարգանքով՝

/ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Nerum P-230 AJV-36-17.docx

«ՆԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-230-22.07.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները «Ներման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից շրջանառության մեջ է դրվել «Ներման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, համաձայն որի, ի թիվս այլ փոփոխությունների, սահմանվում է նաև դատապարտված անձի կողմից ներման խնդրագիր ներկայացնելու դեպքում տուժողին կամ նրա իրավահաջորդին ծանուցելու և դիրքորոշում ստանալու կարգը, սակայն նախագծից տարբերվող կարգավորումներով:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսվում է քրեական օրենսգիրքը լրացնել 342.2-րդ հոդվածով, ինչպես նաև «Ներման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսվում է օրենքը լրացնել 5-րդ հոդվածի 5.1-ին մասով, որով քրեական պատասխանատվություն կսահմանվի տուժողի կամ տուժողի իրավահաջորդի կողմից ներման խնդրագրում առկա տվյալների հրապարակման համար:

Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ նկարագրված արարքը չի կարող մեկնաբանվել որպես բավարար հանրային վտանգավորություն ունեցող, որպեսզի պետության կողմից հակազդեցության արժանանա քրեաիրավական ներգործության միջոցներ կիրառելով: Հետևաբար, գտնում ենք, որ ներման խնդրագրում առկա տվյալների հրապարակումը որպես հանցագործություն սահմանելու անհրաժեշ-տությունը բացակայում է:

Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկում ենք ձեռնպահ մնալ ներկայացված օրենքի նախագծի քննարկումից և դրա դրույթներին անդրադառնալ Հայաստանի Հանրա-պետության կառավարության կողմից ներկայացված օրենսդրական նախաձեռնության համատեքստում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 օգոստոսի 2019 թվականի N 1092 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Սրբուհի Գալյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Ներման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-230-22.07.2019-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. օգոստոսի 7
Երևան

Nerum P-230 AJV-36-17.docx

Պ-230-22.07.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՆԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ներման մասին» Հայաստանի Հանրապետության 2018 թվականի մարտի 7-ի ՀՕ-149-Ն օրենքի (այսուհետ՝Օրենք) 5-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Անձնական գործում նշվում են նաեւ տուժողի կամ տուժողի իրավահաջորդի անունը, ազգագանունը եւ հայրանունը:»:

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 5.1-ին մասով. «5.1. Անձնական գործն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, Վարչապետն իրազեկում է ներման խնդրագրի մասին տուժողին կամ տուժողի իրավահաջորդին: Տուժողը կամ տուժողի իրավահաջորդը իրավունք ունեն ներկայացնել իրենց դիրքորոշումը ներման խնդրագրի վերաբերյալ Վարչապետին եւ Հանձնաժողովին: Մինչեւ ներում շնորհելու կամ ներման շնորհելը մերժելու հրամանագրի հրապարակումը տուժողի կամ տուժողի իրավահաջորդի կողմից ներման խնդրագրի վերաբերյալ տվյալների հրապարակումը առաջացնում է քրեական պատասխանատվություն, որի մասին տուժողը կամ տուժողի իրավահաջորդը ծանուցվում են:»:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասում «ուղարկում ներման խնդրագիր ներկայացրած անձին, նախարարություն, իսկ սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում՝ նաեւ պաշտպանության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող եւ իրականացնող նախարարություն» բառերը փոխարինել «հրապարակում է հրամանագիրը» բառերով

1) 6-րդ մասում «ուղարկում է ներման խնդրագիրը ներկայացրած անձին, նախարարություն, իսկ սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում՝ նաեւ պաշտպանության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող եւ իրականացնող նախարարություն» բառերը փոխարինել «հրապարակում է հրամանագիրը» բառերով

2) լրացնել հետեւյալ բովանադակությամբ 6.1-ին մասով. «6.1.Հրամանագիրը հրապարակելիս նշվում են Հանձնաժողովի կողմից ներման խնդրագիրը ստանալու, Հանձնաժողովի կողմից վարչապետին եզրակացություն ներկայացնելու, Վարչապետի կողմից Հանրապետության նախագահին առաջարկություն ներկայացնելու ժամկետները:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Պ-230[1]-22.07.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի 31-րդ գլուխը լրացնել նոր՝ 342.2-րդ հոդվածով.

«Հոդված 342.2. Ներման խնդրագրի վերաբերյալ տվյալների հրապարակումը

Մինչեւ ներում շնորհելը կամ ներման շնորհելը մերժելու հրամանագրի հրապարակումը տուժողի կամ տուժողի իրավահաջորդի կողմից ներման խնդրագրի վերաբերյալ տվյալների հրապարակելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՆԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Առկա վիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Ներկայումս «Ներման մասին» ՀՀ օրենքում նախատեսված չեն որեւէ ընթացակարգեր տուժողների եւ նրանց իրավահաջորդների իրավունքների պաշտպանության համար, ինչի հետեւանքով նրանք զրկված են ներման խնդրագրի քննարկման ժամանակ իրենց դիրքորոշումը լսելի դարձնելու համար: Արդյուքում կարող է ստեղծվել այնպիսի իրավիճակ, որ տուժողը նույնիսկ դատապարտյալին ներում շնորհելուց հետո էլ տեղյակացված չլինի ներման մասին: Բացի դրանից նախատեսված չեն ընթացակարգեր ներում շնորհելու կամ ներումը մերժելու հրամանագրի վերաբերյալ հասարակությանը իրազեկելու, մինչդեռ հատկապես վերջին շրջանում նշված հարցի վերաբերյալ հասարակական տարբեր շրջանակներում քննարկումներ վկայում են, որ նման անհրաժեշտությունը առկա է: